# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի
## ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 3 ՆԻՍՏ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ա Ր Տ Ա Հ Ե Ր Թ  Ն Ի Ս Տ   Թ Ի Վ  3  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Թ Ի Վ  2 5

«05» մարտի 2021թ. ք. Էջմիածին

### ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.12.2020Թ. ԹԻՎ 126 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-37-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի առաջարկությունը

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել 2021 թվականին Էջմիածնի համայնքապետարանի թիվ 1 մարզադպրոց ՀՈԱԿ-ի դահլիճների վարձակալության վարձավճարի չափը՝

1) Մարզական խմբերի համար ամսական մինչև 8 /ութ/ 90 /իննսուն/ րոպե տևողությամբ պարապմունքների վճար՝ 32 000 /երեսուներկու հազար/ ՀՀ դրամ, իսկ ջեռուցման շրջանում 42 000 /քառասուներկու հազար/ ՀՀ դրամ:

2) Մարզական խմբերի համար ամսական մինչև 12 /տասներկու/ 90 /իննսուն/ րոպե տևողությամբ պարապմունքների վճար՝ 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ, իսկ ջեռուցման շրջանում 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

3) Սիրողական անհատական խմբերի համար 1 /մեկ/ 60 /վաթսուն/ րոպե տևողությամբ պարապմունքի վճար՝ 10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ:

4) Սիրողական անհատական /մեկ անձի համար նախատեսված/ 1 /մեկ/ 60 /վաթսուն/ րոպե տևողությամբ պարապմունքի վճար՝ 3 000 /երեք հազար/ դրամ:

5) Մարզական միջոցառումների՝ 1 օրվա համար՝ 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ, իսկ նույն կազմակերպիչների նույն միջոցառման շարունակականության դեպքում յուրաքանչյուր հաջորդ օրվա համար 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Մարզական պարապմունքների ժամերի ու գրաֆիկների կազմակերպումը թողնել ՀՈԱԿ-ի տնօրենի պատասխանատվությանը /հայեցողությանը/:

3. Ուժը կորցրած ճանաչել Էջմիածին համայնքի ավագանու 18.12.2020թ. «Էջմիածնի համայնքապետարանի թիվ 1 մարզադպրոց ՀՈԱԿ-ի դահլիճների վարձակալության վճարների չափերը սահմանելու մասին» թիվ 126 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ավետիսյան Հրաչյա | | | | 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 2. | Գրիգորյան Վարդան | | | | 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 3. | Զաքարյան Սերգեյ | | | | 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 4. | Խաչատրյան Թովմաս | | | | 9. | Մովսիսյան Կարեն | | | |
| 5 | Հայրապետյան Վարուժան | | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26

«05» մարտի 2021թ. ք. Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Էջմիածին քաղաքի ավագանու 2020 թվականի փետրվարի 18-ի «Էջմիածնի համայնքապետարանի նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդունելության կարգ հաստատելու մասին» թիվ 20 որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները

1) 1-ին կետում «Դիմումին կից ներկայացվում է» բառերից հետո կարդալ՝

«1.1.Երեխայի անձը հաստատող փաստաթուղթ /ծննդյան վկայական, անձնագիր/ .

1.2. Դիմում ներկայացնող ծնողի կամ օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթ.

1.3. Ընտանիքի բնակության վայրի /մշտապես կամ առավելապես/ վերաբերյալ փաստաթղթեր. դրանք են՝ մշտական բնակության վայրից տեղեկանք, այդ թվում բնակելի տարածության, օգտագործման, վարձակալության, սեփականության իրավունքի և այլ փաստաղթղթեր: Ընդ որում երեխայի՝ ծնողից առանձին ապրելու դեպքում բավարար է ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցչի/ում հետ երեխան ապրում է/ ներկայացրած պահանջվող փաստաթղթերը:» բառերը:

2)« բ/ հերթը հասնելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում անհնար է պարզել ծնողի /օրինական ներկայացուցչի/ գտնվելու վայրը,»բառերից հետո կարդալ՝

գ/պարզվում է ներկայացված տեղեկությունների անհամապատասխանությունը,

դ/ երեխան ընդունվում է մանկապարտեզ,

ե/ երեխան ընդունվել է հանրակրթական դպրոցի 1-ին դասարան:»:

3)Հավելվածի 2-րդ կետում՝«մշտապես/փաստացի/» բառերից հետո «կամ ժամանակավորապես» բառերը փոփոխել«առավելապես» բառով:

4) Հավելվածի 3-րդ կետում՝ «Անկախ հերթականությունից, արտոնություն կտրվի էջմիածնի համայնքապետարանի ենթակայության տակ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում հերթագրված» բառերից հետո կարդալ «մշտապես/փաստացի/ առավելապես բնակվող քաղաքացիների այն երեխաներին, որոնց ծնողները դիմումին կից կներկայացնեն համայնքի հանդեպ հարկային, տեղական տուրք ու վճարներով սահմանված պարտականությունները բարեխղճորեն կատարելու վերաբերյալ տեղեկանքներ:» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Ավետիսյան Հրայր | | | |
| 2. | Գրիգորյան Վարդան | | | |
| 3. | Զաքարյան Սերգեյ | | | |
| 4. | Խաչատրյան Թովմաս | | | |
| 5 | Հայրապետյան Վարուժան | | | |

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 9. | Մովսիսյան Կարեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Էջմիածին համայնքի
Ավագանու 18 փետրվարի 2020թ.
թիվ 2 արտահերթ նիստի թիվ 20 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է Էջմիածին համայնքի
Ավագանու 05 մարտի 2021թ.
թիվ 3 արտահերթ նիստի թիվ 26 որոշմամբ

# ԿԱՐԳ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Էջմիածին քաղաքում նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունվող երեխաների հաշվառումն ու հերթագրումը կազմակերպվում է համայնքապետարանում:

Երեխային մանկապարտեզում հերթագրման համար երեխայի ծնողը /օրինական ներկայացուցչը/ դիմում էներկայացնում համայնքապետարանի աշխատակազմի Կրթության և մշակույթի բաժնի պետին՝ անձը հաստատող փաստաթղթով: Դիմումում հստակ նշվում է այն մանկապարտեզի համարը, որը ծնողը նախընտրում է երեխայի նախադպրոցական կրթության համար:Դիմումին կից ներկայացվում է

1.1.Երեխայի անձը հաստատող փաստաթուղթ /ծննդյան վկայական, անձնագիր/ .

1.2. Դիմում ներկայացնող ծնողի կամ օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթ.

1.3. Ընտանիքի բնակության վայրի /մշտապես կամ առավելապես/ վերաբերյալ փաստաթղթեր. դրանք են՝ մշտական բնակության վայրից տեղեկանք, այդ թվում բնակելի տարածության, օգտագործման, վարձակալության, սեփականության իրավունքի և այլ փաստաղթղթեր: Ընդ որում երեխայի՝ ծնողից առանձին ապրելու դեպքում բավարար է ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցչի /ում հետ երեխան ապրում է/ ներկայացրած պահանջվող փասըաթղթերը:Երեխային մանկապարտեզ ընդունելու մասին դիմումը ներկայացնելու օրը երեխան հաշվառվում է համապատասխան մանկապարտեզի հերթագրման համակարգում՝ ըստ ծննդյան տարեթվի:

Երեխայի անձնական տվյալները մանկապարտեզի հերթագրման ցանկից ենթակա է հանման, երբ՝

ա/ Ծնողը /օրինական ներկայացուցիչը/ գրավոր հրաժարվում է հերթից,

բ/ հերթը հասնելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում անհնար է պարզել ծնողի /օրինական ներկայացուցչի/ գտնվելու վայրը,

գ/պարզվում է ներկայացված տեղեկությունների անհամապատասխանությունը,

դ/ երեխան ընդունվում է մանկապարտեզ,

ե/ երեխան ընդունվել է հանրակրթական դպրոցի 1-ին դասարան:>>:

Հերթագրված երեխայի մանկապարտեզի տեղափոխությունը հնարավոր է միայն արդեն իսկ դիմած մանկապարտեզի հերթից գրավոր հրաժարվելու և այլ մանկապարտեզի ընդունման համար նոր դիմում ներկայացնելու դեպքում՝ համաձայն վերոնշյալ ընթացակարգի:

Երեխայի հերթը հասնելուն պես անձնական տվյալներն ուղարկվում են համապատասխան մանկապարտեզ, ուր ծնողի /օրինական ներկայացուցչի/ կողմից տնօրենին են ներկայացվում երեխայի բժշկական թերթիկը /26 ձև/ և 2 լուսանկար: Տնօրենի կողմից տրված ընդունման հրամանի օրը ծնողի /օրինական ներկայացուցչի/ և տնօրենի միջև կնքվում է պայմանագիր: Հաջորդ օրվանից երեխան հաճախում է մանկապարտեզ՝ ընդգրկվելով համապատասխան տարիքային խումբ:

Մանկապարտեզ հաճախող երեխային այլ մանկապարտեզ տեղափոխելու դեպքում, ծնողը /օրինական ներկայացուցչը/ պարտավոր է նորից հերթագրել երեխային՝ վերոնշյալ ընթացակարգով:

2. Էջմիածնի համայնքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում հերթագրված Էջմիածին համայնքում մշտապես/փաստացի/ առավելապես

բնակվող քաղաքացիների երեխաները ընդունելության առաջնահերթության սկզբունքով հաստատություն ընդունվում են հետևյալ հերթականությամբ՝

ա/ ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաներ.

բ/ Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց /հիմք ՀՀ ՊՆ տեղեկանք/ երեխաներ.

գ/ Էջմիածին համայնքի սահմաններում գործող զորամասերում ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող անձանց երեխաներ.

դ/ միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաներ.

ե/ հաշմանդամ ծնող ունեցող երեխաներ.

զ/ երեխաներ, որոնց երկու ծնողներն էլ աշխատում են.

է/ ծնողներից մեկի խնամքի տակ գտնվող երեխաներ, որոնց ծնողը, որին հանձնված է երեխայի խնամքն ու դաստիարակությունը, ու որի բնակության վայրում գրանցված է երեխան, աշխատում է.

ը/ համայնքապետարանի նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատողի երեխաներ:

3.Անկախ հերթականությունից, արտոնություն կտրվի Էջմիածնի համայնքապետարանի ենթակայության տակ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում հերթագրված մշտապես/փաստացի/ առավելապես բնակվող քաղաքացիների այն երեխաներին, որոնց ծնողները դիմումին կից կներկայացնեն համայնքի հանդեպ հարկային, տեղական տուրք ու վճարներով սահմանված ,պարտականությունները բարեխղճորեն կատարելու վերաբերյալ տեղեկանքներ:

4. Եթե երեխան մեկ ամիս անընդմեջ անհարգելի պատճառով չի հաճախել մանկապարտեզ, ապա տվյալ մանկապարտեզի տնօրենը իրավասու է երեխայի ազատման հրաման տալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27

«05» մարտի 2021թ. ք. Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 57-րդ, 76-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001 թվականի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետի դրույթները և ք. Էջմիածին, Թումանյան փող., թիվ 24Ա տան բնակիչ Բորիս Մորիսի Բաբաջանյանի դիմումը ու համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Էջմիածին քաղաքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով 10 /տաս/ տարի ժամկետով Բորիս Մորիսի Բաբաջանյանին /կառուցապատող/ (անձնագիր AT0607878), օգտագործման տրամադրել Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայական N 03022021-04-0070/ Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փող., թիվ 6/50 հասցեում գտնվող 0,00195հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը, առևտրի տաղավար (ոչ հիմնական շինություն) տեղադրելու նպատակով:

2. Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի չափը սահմանել 1 /մեկ/ քմ հողամասի համար 7 500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

3. Էջմիածնի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցներին հանձնարարել՝ Էջմիածին համայնքի ղեկավարի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նոտարական գրասենյակում ներկայացնել վավերացման Էջմիածին համայնքի և կառուցապատողի միջև կնքվելիք անշարժ գույքի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին պայմանագիրը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Ավետիսյան Հրաչյա | | | | 6. Ղազարյան Գևորգ | | | |
| 2. Գրիգորյան Վարդան | | | | 7. Մելիքյան Ներսես | | | |
| 3. Զաքարյան Սերգեյ | | | | 8. Միրզոյան Կամայիս | | | |
| 4. Խաչատրյան Թովմաս | | | | 9. Սողոմոնյան Կարեն | | | |
| 5 Հայրապետյան Վարուժան | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

[illegible]
[illegible]
[illegible] 24ա [illegible]
[illegible]

# Դիմում

[illegible]

[illegible]
033999930
[illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

Ազգանունը
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Սեռը
Ա

Անունը
ԲՈՐԻՍ ՄՈՐԻՍԻ

Քաղաքացիությունը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ծնված է
17.08.1960

Ծննդավայրը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Տրված է
10.12.2020

Վավեր է մինչև
10.12.2030

Մարմինը
057

Անձնագրի տիրոջ ստորագրությունը SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE
P

COUNTRY CODE
ARM

PASSPORT №
AT0607818



SURNAME(S)
BABAJANYAN

NAME
BORIS

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
17 AUG 1960

PERSONAL №

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
10 DEC 2020

DATE OF EXPIRY
10 DEC 2030

AUTHORITY
057

P<ARMBABAJANYAN<<BORIS<<<<<<<<<<<<<<<<<<<<<<

AT06078183ARM6008178M3012109<<<<<<<<<<<<<<04

4

ԱՅՍ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN COUNTRIES UNTIL

16.12.2025

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS

5

Հաշվառված է [illegible] 057

[illegible]

« 16 » 11 20 1995 թ. [illegible]

AT 0607019

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:300



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21

«05» մարտի 2021թ. ք. Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ ՄԱՐՏԻ 05-Ի ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասի պահանջներով.

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Էջմիածին համայնքի 2021թ. մարտի 05-ի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ավետիսյան Հրաչյա | | | | 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 2. | Գրիգորյան Վարդան | | | | 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 3. | Զաքարյան Սերգեյ | | | | 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 4. | Խաչատրյան Թովմաս | | | | 9. | Մովսիսյան Կարեն | | | |
| 5 | Հայրապետյան Վարուժան | | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*Էջմիածին համայնքի ավագանու*
*2021 թվականի մարտի 05- ի*
*թիվ 3 արտահերթ նիստի թիվ 21որոշման*

# ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 - Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 132 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.12.2020Թ. ԹԻՎ 126 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՓՈՂՈՑՆԵՐԸ, ԽՃՈՒՂԻՆ ԵՎ ԹԱՂԱՄԱՍԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22-Ն

«05» մարտի 2021թ. | ք. Էջմիածին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 - Ի N 133-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության 01.02.2021թ. թիվ 06/27.1/2007-2021 գրությունը

Համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «էջմիածին համայնքի 2021թ. բյուջեի հաստատման մասին» թիվ 133-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Ավետիսյան Հրայր | [signature] | | | 6. Ղազարյան Գևորգ | [signature] | | |
| 2. Գրիգորյան Վարդան | [signature] | | | 7. Մելիքյան Ներսես | [signature] | | |
| 3. Զաքարյան Սերգեյ | [signature] | | | 8. Միրզոյան Արամայիս | [signature] | | |
| 4. Խաչատրյան Թովմաս | [signature] | | | 9. Մովսիսյան Կարեն | [signature] | | |
| 5 Հայրապետյան Վարուժան | [signature] | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ .................. Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
ավագանու 05 մարտի 2021թ.
թիվ 22 - Ն որոշմամբ

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 1 ՀԱՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բյուջեի եկամուտներ՝ հատված 1

Հազար դրամ

| No | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2021թ. ծրագիր |
|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 1775449,3 |
| 1 | *ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | 420000,0 |
| 1,1 | Հողի հարկ | 70000,0 |
| 1,2 | Գույքահարկ /շենքերից և փոխադրամիջոցներից/ | 350000,0 |
| 2 | *ՏՈՒՐՔԵՐ* | 68476,5 |
| 2,1 | Պետական տուրքեր | 28000,0 |
| 2,2 | Տեղական տուրքեր | 40476,5 |
| 3 | *ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | 338066,5 |
| 3,1 | Գույքի և հողի վարձակալու- թյունից եկամուտներ | 29500,0 |
| 3,2 | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 3606,0 |
| 3,3 | Տեղական վճարներ | 289960,5 |
| 3,4 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 15000,0 |
| 5 | *ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ* | 948906,3 |
| 5,1 | Դոտացիա | 783962,9 |
| 5,2 | Այլ դոտացիա | |
| 5,3 | Այլ ընթացիկ դրամաշնորհ /զինծառայողներ/ | 2370,0 |
| 5,4 | Փոխատվություններ /սուբվ./ | 4900,8 |
| 5,5 | Պատվիրակ. լիազոր. իրական. համար ստացվող միջ. | 7473,3 |
| 5,6 | Միջազգային կազմակերպություն | |
| 5,7 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 150199,3 |
| 6 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | |

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 2 ՀԱՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2

Հազար դրամ

| No | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2021թ. ծրագիր |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 1922684.0 |
| 1 | *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ* | 236453.9 |
| 1,1 | Տեղական ինքնակառավարում | 228980.6 |
| 1,2 | Ընդհանուր բնույթի համայն քային այլ ծառայություններ | 7473,3 |
| 2 | *ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ* | 583700,0 |
| 2,1 | Նախադպրոցական դաստիրակություն | 405600,0 |
| 2,2 | Արտադպրոցական կրթություն | 178100,0 |
| 3 | *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑ ԱՊԱՀՈՎ.* | 22500,0 |
| 4 | *ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ* | 189800.0 |
| 4,1 | Գրադարաններ | 34000,0 |
| 4,2 | Մշակույթի տներ | 32400,0 |
| 4,3 | Թանգարաններ | 20600,0 |
| 4,4 | Սպորտ | 79700.0 |
| 4,5 | Այլ ծրագրեր | 23100,0 |
| 5 | *ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ* | 539135.9 |
| 6 | *ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | -101000,0 |
| 7 | *ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ* | 452094.2 |
| 7,1 | Կապիտալ տրանֆերտ | 150199.3 |
| 7,2 | Միջազգային կազմակերպություն | |
| 7,3 | Այլ ծրագրեր /ֆոնդ. բյուջե/ | 233864.9 |
| 7,4 | Վարչական մասի պահուստային ֆոնդ | 68030.0 |

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 3 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման ՛ հատված 3

Հազար դրամ

| No | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2021 թ ծրագիր |
|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 1922684.0 |
| Ա | *Ընթացիկ ծախսեր* | 1639619.8 |
| | Աշխատավարձ | 453536,0 |
| | Էներգետիկ ծառայություններ | 75640.1 |
| | Կոմունալ ծառայություններ | 300,0 |
| | Կապի ծառայություններ | 4130,0 |
| | Ապահովագրական ծախսեր | 5460.0 |
| | Գույքի և սարք. վարձակ. | 2000,0 |
| | Ներքին գործուղումներ | 500,0 |
| | Արտասահմանյան գործուղում | 1000,0 |

| | | |
|---|---|---|
| | Համակարգչային ծառայություն | 1000,0 |
| | Տեղեկատվական ծառայություններ | 1000,0 |
| | Ներկայացուցչական ծախսեր | 1500,0 |
| | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 43100,0 |
| | Մասնագիտական ծառայություն | 1000,0 |
| | Շենք. և կառույց. ընթաց. նորոգ. | 72000,0 |
| | Մեք. և սարք. ընթ. նորոգում. | 5500,0 |
| | Գրասենյակային նյութեր և հագուստ | 9214,0 |
| | Տրանսպորտային նյութեր | 75333.8 |
| | Առողջապահական և լաբորատոր նյութեր | 500,0 |
| | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 1200,0 |
| | Հատուկ նպատակային այլ նյութեր | 35985.9 |
| | Սոց. օգնության նպաստներ բյուջեից | 24990.0 |
| | Սուբսիդիաներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին | 750400.0 |
| | Ընթացիկ դրամաշնորհներ միջազ. կազմակերպություններին | 500,0 |
| | Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 800,0 |
| | Այլ կապիտալ դրամաշնորհներ | |
| | Այլ հարկեր | 3000,0 |
| | Քաղաքացիական պաշտպանություն | 2000,0 |
| | Պահուստային ֆոնդ | 68030.0 |
| բ | *Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր* | 384064.2 |
| | Նախագծահետազոտական ծախսեր | 12437.0 |
| | Շենք. շինությ. կապ. նորոգ. | 313627.2 |
| | Տրանսպորտային սարքեր | 15000.0 |
| | Վարչական սարքավորումներ | 43000.0 |
| | Այլ մեքեն. և սարքավորումներ | |
| | Պահուստային ֆոնդ | |
| գ | *Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր* | -101000,0 |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | -11000,0 |
| | Հողի իրացումից մուտքեր | -90000,0 |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | |
| | Կապիտալ տրանֆերտ | |
| | Միջազգային կազմակերպ. մուտքեր | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էջմիածին համայնքի ավագանու «Էջմիածին համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի որոշումը կատարելու և բյուջեի վարչական մասի եկամուտների ավելացումը Էջմիածին համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 26.01.2021թ. թիվ 2 նիստի թիվ 12 և թիվ 13 որոշումները.

1.1. Ավելացնել բյուջեի վարչական մասի եկամուտների <Տեղական վճարներ> 1351 տողը 2250.0 հազ. դրամ:

1.2. Բյուջեի վարչական մասի ծախսը ավելացնել 2250.0 հազ. դրամ և ուղղել հանգստի և սպորտի ծառայությունների /բաժին 08, խումբ 1, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածին /հոդ. 4511/:

1.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Նվազեցնել՝

2.1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը /բաժին 11, խումբ 1, դաս 2, հոդ. 4891/ 15750.0 հազ. դրամ:

2.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Ավելացնել՝

3.1. Հանգստի և սպորտի ծառայությունների /բաժին 08, խումբ 1, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածին /հոդ. 4511/ 15750.0 հազ. դրամ:

3.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

*0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015*

*Էլ. Փոստ suren.galstyan@justice.am*

N06/27.1/2007-2021

<01> փետրվարի 2021թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏԻԿԻՆ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

**Հարգելի տիկին Գասպարյան**

Ի պատասխան Ձեր 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 201 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 133-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

2/1/2021

СЕКРЕТАРИАТ

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լյուդվիգ Մելքոնյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 18

...րդարադատության
...ախարարություն

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 133-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1. Նախագծի 1-ին կետում «թիվ 1 հավելվածի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հավելվածի» բառով, քանի որ նախագծով հաստատվում է միայն մեկ հավելված:

2. Նախագծով հաստատվող հավելվածի անվանման մեջ «հունվարի» բառն անհրաժեշտ է փոխարինել «փետրվարի» բառով

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝**

2/1/2021

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23

«05» մարտի 2021թ. ք. Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետին պահանջներով

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել էջմիածին քաղաքային համայնքի սեփականության 2020 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելված թիվ 1-ի և թիվ 2-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Ավետիսյան Հրայր | | | | 6. Ղազարյան Գևորգ | | | |
| 2. Գրիգորյան Վարդան | | | | 7. Մելիքյան Ներսես | | | |
| 3. Զաքարյան Սերգեյ | | | | 8. Միրզոյան Արամայիս | | | |
| 4. Խաչատրյան Թովմաս | | | | 9. Մովսիսյան Կարեն | | | |
| 5 Հայրապետյան Վարուժան | | | | | | | |

............................ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 05 մարտի 2021թ.
Արտահերթ թիվ 3 նիստի թիվ 23 որոշմամբ

# ՑՈՒՑԱԿ

Էջմիածնի համայնքապետարանի և նրա ենթակա բյուջետային հիմնարկների ու ՀՈԱԿ-երի հիմնական միջոցների և արագամաշ, փոքրարժեք գույքի

| Հ/Հ | Հիմնարկի անվանում | Հիմնական միջոց | | Փոքրարժեք | |
|---|---|---|---|---|---|
| | | անվանում | գումար | անվանում | գումար |
| 1 | Համայնքապետարան | 366 | 315 846 774,2 | 120 | 7 256 474 |
| 2 | <Բարեկարգում> տնօրինություն | 164 | 604 768 096 | 82 | 9 849 674 |
| 3 | Բնակ. կոմունալ վարչություն | 80 | 215 374 531 | 13 | 1 109 400 |
| 4 | <Թիվ 1 մարզադպրոց> ՀՈԱԿ | 68 | 77 991 174 | 105 | 2 421 692 |
| 5 | <Հ. Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան> ՀՈԱԿ | 39 | 28 267 367 | 167 | 2 026 555,6 |
| 6 | <Պատմա-ազգագրական թանգարան> ՀՈԱԿ | 33 | 4 867 921 | 45 | 973 793 |
| 7 | <Հ. Հովհաննիսյանի տուն-թանգարան> ՀՈԱԿ | 3 | 883 133 | 24 | 320 785,6 |
| 8 | <Կոմիտասի նավան մշակույթի պալատ> ՀՈԱԿ | 72 | 78 643 085 | 17 | 194 550 |
| 9 | Թիվ 5 <Գարուն> ՀՈԱԿ | 33 | 21 537 276 | 54 | 785 778 |
| 10 | Թիվ 6 <Արևիկ> ՀՈԱԿ | 48 | 21 394 388 | 110 | 1 787 121 |
| 11 | Թիվ 10 <Շուշան> ՀՈԱԿ | 71 | 22 605 368 | 116 | 833 672 |
| 12 | Թիվ 11 <Հասմիկ> ՀՈԱԿ | 62 | 15 229 778 | 86 | 849 713 |
| 13 | Թիվ 13 <Ծիծեռնակ> ՀՈԱԿ | 61 | 48 888 402 | 74 | 12 139 263 |
| 14 | Թիվ 14 <Ձնծաղիկ> ՀՈԱԿ | 59 | 34 439 431 | 164 | 1 676 007 |
| 15 | Թիվ 15 <Զվարթնոց> ՀՈԱԿ | 52 | 26 226 261 | 119 | 632 913 |
| 16 | Թիվ 16 <Ռտան> ՀՈԱԿ | 74 | 45 026 200 | 152 | 1 716 157 |
| 17 | <Մ. Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց> ՀՈԱԿ | 64 | 14 732 928,6 | 69 | 1 063 814 |
| 18 | <Ս. Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց> ՀՈԱԿ | 69 | 12 179 570,4 | 71 | 563 133,5 |
| 19 | <Ե. Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց> ՀՈԱԿ | 18 | 1 159 417 | 68 | 1 063 279,5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1436 | 1 590 061 101,2 | 1656 | 47 263 775,2 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 05 մարտի 2021թ.
Արտահերթ թիվ 3 նիստի թիվ 23 որոշմամբ

# ՑՈՒՑԱԿ

Էջմիածնի համայնքապետարանի և նրա ենթակա բյուջետային հիմնարկների ու ՀՈԱԿ-երի դուրս գրման ենթակա գույքի

| Հ/Հ | Հիմնարկի անվանում | Հիմնական միջոց | | Փոքրարժեք | |
|---|---|---|---|---|---|
| | | անվանում | գումար | անվանում | գումար |
| 1 | Համայնքապետարան | 36 | 6 320 325 | 26 | 2 481 431 |
| 2 | <Բարեկարգում> տնօրինություն | 15 | 11 253 815 | 34 | 3 030 943 |
| 3 | Բնակ. կոմունալ վարչություն | 1 | 591 800 | 3 | 102 000 |
| 4 | <Թիվ 1 մարզադպրոց> ՀՈԱԿ | 1 | 107 000 | 17 | 256 935 |
| 5 | <Հ. Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան> ՀՈԱԿ | 0 | 0 | 12 | 71 550 |
| 6 | <Պատմա-ազգագրական թանգարան> ՀՈԱԿ | 13 | 558 864,2 | 13 | 321 155 |
| 7 | <Հ. Հովհաննիսյանի տուն-թանգարան> ՀՈԱԿ | 0 | 0,0 | 0 | 0 |
| 8 | <Կոմիտասի նավան մշակույթի պալատ> ՀՈԱԿ | 0 | 0,0 | 0 | 0 |
| 9 | Թիվ 5 <Գարուն> ՀՈԱԿ | 5 | 276 947 | 7 | 34 901 |
| 10 | Թիվ 6 <Արևիկ> ՀՈԱԿ | 2 | 54 000 | 10 | 114 251 |
| 11 | Թիվ 10 <Շուշան> ՀՈԱԿ | 3 | 41 552 | 8 | 11 700 |
| 12 | Թիվ 11 <Հասմիկ> ՀՈԱԿ | 2 | 53 600 | 10 | 17 150 |
| 13 | Թիվ 13 <Ծիծեռնակ> ՀՈԱԿ | 0 | 0 | 0 | 0 |
| 14 | Թիվ 14 <Ձնծաղիկ> ՀՈԱԿ | 3 | 73 649 | 24 | 126 272 |
| 15 | Թիվ 15 <Զվարթնոց> ՀՈԱԿ | 0 | 0 | 0 | 0 |
| 16 | Թիվ 16 <Ոստան> ՀՈԱԿ | 7 | 164 768 | 17 | 98 119 |
| 17 | <Մ. Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց> ՀՈԱԿ | 2 | 99 796 | 12 | 29 665,5 |
| 18 | <Ս. Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց> ՀՈԱԿ | 1 | 182 000 | 2 | 2 300 |
| 19 | <Ե. Թաղևոսյանի անվան գեղարվեստի դպրոց> ՀՈԱԿ | 7 | 141 729 | 6 | 38 202,1 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 98 | 19 919 845,2 | 201 | 6 736 574,6 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24

«05» մարտի 2021թ. — ք. Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 132 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Էջմիածին քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2021թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 132 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Աշխատակիցների քանակը կետում «86» քանակի փոխարեն կարդալ «85» քանակը:

2) Կրթության և մշակույթի բաժին մասի 2-րդ կարգի մասնագետ հատվածը կարդալ հետևյալ կերպ՝ միավոր «3», աշխատավարձի ֆոնդ «360000»:

3) ընդամենը տողում գրված՝ «8» միավորի փոխարեն կարդալ՝ «7», «1,174,000» թվերի փոխարեն կարդալ «1,054,000» թվերը:

4) ընդհանուր հավելվածի ընդամենը տողում գրված՝ «86» միավորի փոխարեն կարդալ՝ «85», «13,606,808» թվերի փոխարեն կարդալ «13,486,808» թվերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Ավետիսյան Հրաչյա | | | |
| 2. | Գրիգորյան Վարդան | | | |
| 3. | Զաքարյան Սերգեյ | | | |
| 4. | Խաչատրյան Թովմաս | | | |
| 5 | Հայրապետյան Վարուժան | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 9. | Սոփիկյան Պարգև | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 18-ի դեկտեմբերի 2020թ.
թիվ 12 նիստի թիվ 132 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 26-ի հունվարի 2021թ.
թիվ 2 նիստի թիվ 12 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 5-ը մարտի 2021թ.
թիվ 3 նիստի թիվ 24 որոշմամբ

## 2021թ. համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածնի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը 85

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքը | Միավոր | Դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| | **Քաղաքական և հայեցողական պաշտոններ** | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 470 000 | 470000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 2 | 341000 | 682000 |
| 3 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 280000 | 280000 |
| | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 280000 | 280000 |
| 4 | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | 1 | 276000 | 276000 |
| | **Ընդամենը** | 6 | | 1 988 000 |
| | **Համայնքային ծառայության պաշտոններ** | | | |
| | **Աշխատակազմ** | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 341000 | 341000 |
| | **Ընդամենը** | 1 | | 341000 |
| | **Ֆինանսական բաժին** | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 276000 | 276000 |
| 2 | Գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահ | 1 | 250000 | 250000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 4 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 134000 | 268000 |
| 5 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| | **Ընդամենը** | 6 | | 1 064 000 |
| | **Իրավաբանական բաժին** | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 276000 | 276000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 3 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 134000 | 268000 |
| 4 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| | **Ընդամենը** | 5 | | 814 000 |
| | **Բյուջետային մուտքերի ապահովման բաժին** | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 276000 | 276000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 3 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 134000 | 134000 |
| 4 | 2-րդ կարգի մասնագետ | 9 | 120000 | 1080000 |
| | **Ընդամենը** | 12 | | 1 640 000 |
| | **Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին** | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 276000 | 276000 |
| 2 | Բաժնի պետի տեղակալ | 1 | 210000 | 210000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 4 | 1-ին կարգի մասնագետ | 4 | 134000 | 536000 |
| 5 | 2-րդ կարգի մասնագետ | 3 | 120000 | 360000 |
| | **Ընդամենը** | 10 | | 1 532 000 |
| | **Ինֆորմացիայի, վերլուծության և արտաքին կապերի բաժին** | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 276000 | 276000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 | 150000 | 150000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 134000 | 134000 |
| 4 | 2-րդ կարգի մասնագետ | 2 | 120000 | 240000 |
| | **Ընդամենը** | 5 | | 800 000 |
| | **Ընդհանուր, սոցիալական և առողջապահության բաժին** | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 276000 | 276000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 3 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 134000 | 134000 |
| 4 | 2-րդ կարգի մասնագետ | 5 | 120000 | 600000 |
| | **Ընդամենը** | 8 | | 1 160 000 |
| | **Կրթության և մշակույթի բաժին** | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 276000 | 276000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 3 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 134000 | 268000 |
| 4 | 2-րդ կարգի մասնագետ | 3 | 120000 | 360000 |
| | **Ընդամենը** | **7** | | **1 054 000** |
| | **ՔԿԱԳ առանձնացված ստորաբաժանում** | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 276000 | 276 000 |
| 2 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 134000 | 268 000 |
| | **Ընդամենը** | 3 | | **544 000** |
| | **Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ** | | | |
| 1 | Անձնակազմի ղեկավար | 1 | 276000 | 276000 |
| 2 | Գործավար | 1 | 138000 | 138000 |
| 3 | Գործավար | 5 | 100000 | 500000 |
| 6 | Վարորդ | 1 | 98000 | 98000 |
| 7 | Սանտեխնիկ-հյուսն | 1 | 150000 | 150000 |
| 8 | Էլեկտրիկ | 1 | 160000 | 160000 |
| 9 | Տնտեսվար | 1 | 165000 | 165000 |
| 10 | Հավաքարար | 8 | 88312 | 706496 |
| 11 | Բանվոր | 1 | 88312 | 88312 |
| 12 | Օպերատոր-նկարահանող մասնագետ | 1 | 134000 | 134000 |
| 13 | Օպերատոր- մոնտաժի մասնագետ | 1 | 134000 | 134000 |
| | **Ընդամենը** | **22** | | **2 549 808** |
| | **Ընդամենը** | **85** | | **13 486 808** |

1974 թվականի հունվարի մեկից հետո ծնված և նվազագույն աշխատավարձ ստացող աշխատակիցների պարտադիր սոցիալական վճարի գումարը փոխհատուցելու նպատակով փոխհատուցման գումարի չափը նախատեսվում է հավելավճար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2021թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 132 որոշմամբ հաստատված հավելված թիվ 2-ի մեջ փոփոխություններ կատարելու անհարժեշտությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

Կրթության և մշակույթի բաժնում Էջմիածին համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 18-ի թիվ 19 որոշման և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.03.2020թ-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» N 358-Ա հրամանի հիման վրա, ավելացվել է կրթության և մշակույթի բաժնի առաջատար մասնագետի պաշտոն, որը ժամանակին համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացրած մրցույթի արդյունքների հիման վրա համալրվել է:

Ներկա պահին առաջացել է կրթության և մշակույթի բաժնում երկրորդ կարգի մասնագետի պաշտոնի կրճատման անհրաժեշտություն /պաշտոնի անձնագրի ծածկագիր 3.3-39/, քանի որ նշված պաշտոնը թափուր է և այն համալրելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ